

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼՆՆԻՆԸ ՅԵՎ ՄԻԶՍԿԻ
ՀԵՏ ԳԱՇԻՆՔԻ
ՈՐՆԵՆԱԼԻ ՆԱԲԵՐ

ԳՈՏԵՐՍ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938



ՊՐՈՂԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

3K94

u 85

Լրաց.

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱՅՈՒԳՎԱԾ Է 1961

331.918

3K0-2 ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ՀԵՏ
ԴԱՇԻՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՐՑԸ

Պատասխան ընկ. Ս.-ին

5862-965 01



Գ Ե Տ Հ Ր Ա Տ

ԻՍՏԱՆԲՈՒԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1938

А $\frac{\text{II}}{6920}$

И. СТАЛИН
ЛЕНИН И ВОПРОС О СОЮЗЕ
С СЕРЕДНЯКОМ

Армгиз—Издательство полит. литературы,
Ереван, 1938

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՄԻՋՍԿԻ ՀԵՏ ԴՍՇԻՆՅ ՌԻՆԵՆՍԱԼՈՒ ՀԱՐՅԸ¹

Պատասխան ընկ. Ս.—ին

Ընկե՛ր Ս.

Ճիշտ չե, թե Լենինի լողունը՝ «կարողանալ համա-
ձայնության հասնել միջակ դյուղացիության հետ՝ վոչ մի
բույն չհրաժարվելով կուլակի դեմ պայքարելուց ու ամրապես
հենվելով միայն չքաղտրության վրա», վոր նա տվել է Պի-
տիրիմ Սորոկինի մասին դրած իր հայտնի հոդվածում, —
իրը թե «չքաղտրական կոմիտեների ժամանակաշրջանի» լո-
ղունն է, «միջակ դյուղացիության աշխատեա կոչված չեզո-
քացման ժամանակաշրջանի վերջի» լողունն է: Սա բոլորո-
վին նիշտ չե: Չքաղտրական կոմիտեները հիմնվել են 1918
թվականի հունիսին: 1918 թվականի հոկտեմբերի վերջին
մենք արդեն ունեյինք մեր ուժերի գերակշռություն դյու-
ղում կուլակության դեմ ու միջակի շրջադարձ խորհրդային
իշխանության կողմը: Հենց այդ շրջադարձի բազայի վրա ել
ծաղեց Կկ—ի վճիռը յերկիշխանությունը խորհուրդների ու
չքաղտրական կոմիտեների միջև վոչնչացնելու մասին, դա-
վառակային ու դյուղական խորհուրդների վերընտրու-
թյունների մասին, չքաղտրական կոմիտեները նորընտիր
խորհուրդներում լուծելու մասին ու, հետևաբար, չքաղտ-
րական կոմիտեների լիկվիդացիայի մասին: Այս վորոշման
խորհրդային ձևավորումն ընդունվեց, ինչպես հայտնի յե,
1918 թ. նոյեմբերի 9—ին խորհուրդների VI համագումար-
ում: Յես նկատի ունեմ խորհուրդների VI համագումարի
1918 թ. նոյեմբերի 9—ի վորոշումը դյուղական ու դավառա-
կային խորհուրդների վերընտրությունների ու չքաղտրական:

¹ Տպագրվում է միջանի կրճատումներով: Ի. Սպ.:

կոմիտեները խորհուրդներում լուծելու մասին: Իսկ յե՞րբ լույս տեսա՞վ Լենինի՝ «Պիտիրիմ Մորոկինի արժեքավոր խոստովանությունները» հոդվածը, վերապէս նա միջակի չեւորքացման լուրերու վտխարեն հռչակում և միջակի հետ համաձայնութեան գալու լուրերը: Այն լույս տեսա՞վ 1918 թիվականի նոյեմբերի 21-ին, այսինքն՝ խորհուրդների V համագումարի այդ վերջում ից գրեթե յերկու շաբաթ հետո: Այդ հոդվածում Լենինն ուղղակի ասում և, վոր միջակի հետ համաձայնութեան գալու քաղաքականութեանը թեւադրու՞մ և միջակի շրջադարձով գեպի մեր կողմը: Ահա Լենինի խոսքերը.

«Գլուխում մեր խնդիրն է՝ վոչնչացնել կալվածատիրոջը, կտարել շահադործող ու սպեկուլանտ-կուլակի դիմադրութեանը. այս բանի համար մենք ամուր հենվել կարող ենք միայն կիսապրոլետարների վրա, «չքափորութեան» վրա: Բայց միջակ դյուրացին մեզ թշնամի չէ: Նա տատանվել և, տատանվում և և տատանվելու յե. տատանվողների վրա ներդործելու խնդիրը միատեսակ չի շահադործողին տապալելու և ակտիվ թշնամուն հաղթելու խնդրի հետ: Կարողանալ համաձայնութեան հասնել միջակ դյուրացու հետ՝ վոչ մի րոպե չհրատարակելով կուլակի գեմ պայքարելուց ու ամբողջ հենվելով միայն չքափորութեան վրա—այս և մոմենտի խնդիրը, վորովհետև հենց այժմ, վերը շարադրած սյանառանների հետևանքով միջակ գյուղացիութեան շրջադարձը դեպի մեր կողմն անխուսափելի յե»¹ (հ. XXIII, էջ 294):

Իսկ սրանից ի՞նչ և հետևում:

Իսկ սրանից այն և հետևում, վոր Լենինի լուրերը վերարկրում և վո՛չ թե հիմ ժամանակաշրջանին, վո՛չ թե միջակի չեւորքացման ու չքափորական կոմիտեների ժամանակաշրջանին, այլ նոր ժամանակաշրջանին, միջակի հետ համաձայնութեան գալու ժամանակաշրջանին: Այսպիսով, նա արտացոլում և վո՛չ թե հին ժամանակաշրջանի վերջը, այլ նոր ժամանակաշրջանի սկիզբը:

Բայց ձեր պնդումը Լենինի լուրերու մասին ճիշտ չէ վո՛չ միայն ձեռականորեն, վո՛չ միայն այսպես ասած՝ ժամանակագրական տեսակետից,—այն ճիշտ չէ նաև ըստ ելուձի: Հայտնի յե, վոր միջակի հետ համաձայնութեան գալու՝ Լենինի լուրերը, վորպես նոր լուրեր, համակուսակ-

1 Ընդգծումներն ամենուրեք իմն են, Ի. Ստ.:

յսական հռչակում ստացալ մեր կուսակցութեան VIII համա-
գումարում (1919 թվականի մարտ) : Հայտնի չէ, վոր կու-
սակցութեան VIII համագումարը հենց այն համագումարն է,
վորը հիմնադրեց միջակի հետ ամուր դաշինք ունենալու
մեր քաղաքականութեան հիմունքները : Հայտնի չէ, վոր
մեր ծրագիրը, Համկոմկուսի ծրագիրը, ընդունված է
նույնպես կուսակցութեան VIII համագումարում : Հայտնի
չէ, վոր այդ ծրագրում հատուկ կետեր կան կուսակցութեան
վերաբերմունքի մասին գեպի գյուղի տարբեր խմբավորում-
ները՝ գեպի չքավորութեանը, գեպի միջակները, գեպի
կուլակութեանը : Ի՞նչ է ասված Համկոմկուսի ծրագրի այդ
կետերում գյուղի սոցիալական խմբավորումների և գեպի
այդ խմբավորումները կուսակցութեան վերաբերմունքի մա-
սին : Լսեցեք :

«Գյուղում կատարած իր սմբողջ աշխատանքում Ռկկ առաջնա պես
հեմվում է նրա պրոլետարական և կիսապրոլետարական շերտերի վրա,
նրանց կողմակերպում է ամենից առաջ վորպես ինքնուրույն ուժ,
ստեղծելով գյուղում կուսակցական բջիջներ, չքավորութեան կողմա-
կերպութեաններ, գյուղի պրոլետարների ու կիսապրոլետարների հա-
տուկ ախլի արհեստակցական միութեաններ և այլն, ամեն կերպ նրանց
մոտեցնելով քաղաքային պրոլետարիատին ու դուրս քաշելով նրանց
գյուղական բուրժուազիայի և մանր սեփականատիրական շահերի ազ-
դեցութեանից :

Կուլակութեան, գյուղական բուրժուազիայի նկատմամբ Ռկկ քաղա-
քականութեանը մի վնասակա պայքար է նրանց շահագործողական
նկրտումների դեմ, խորհրդային քաղաքականության հանդեպ նրանց
ցուցաբերած դիմադրությանն անհաղթ է :

Միջակ գյուղացիութեան նկատմամբ Ռկկ քաղաքականութեանն
այն է, վոր աստիճանաբար ու տղանաչափ կերպով նրան ներդրալի սո-
ցիալիստական շինարարութեան աշխատանքի մեջ : Կուսակցութեանն իրեն
խնդիր է դնում՝ նրան բաժանել կուլակներից, նրան բանվոր դասա-
կարգի կողմը գրավել ուշագիր վերաբերմունքով գեպի նրա կարիքները,
պայքարելով նրա հետամնացութեան դեմ քաղաքային ներդրում-
ութեան միջոցներով, բնավ չեբեք ճնշման միջոցներով, ձգտելով բոլոր
այն գեպներում, վորտեղ շոշափված են նրա կենսական շահերը, գործ-
նական համաձայնությունների գալ նրա հետ, նրան զիջումներ անելով
սոցիալիստական փոխակերպութեանների կենսագործման յեղանակներ
սահմանելու մեջ» («Ռկկ VIII համագումար», սղագիր հաշվետվու-
թյուն, էջ 396) :

Ապա մի փորձեցե՛ք դռնել թեկուզ ամենալուրջը, թեկուզ բառերի տարբերությունն ծրագրի այս կետերի և Լենինի լուրջունդի միջև: Դուք այդպիսի տարբերությունն չեք դռնի, վորովհետև բնության մեջ դոյությունն չունի այն: Դեռ ավելին: Վոչ մի կասկած չի կարող լինել, վոր Լենինի լուրջունդը վո՛չ միայն չի հակասում VІІІ համադումարի վորոշումնե-րին միջակի մասին, այլ, ընդհակառակը, այդ վորոշումների ամենաճշգրիտ ու ամենահաջող ձևակերպումն է: Իսկ չե՞ վոր սա փաստ է, վոր Համկի ծրագիրն ընդունվել է 1919 թվի մարտին կուսակցության VІІІ համադումարում, վորը հասուկ կերպով քննարկել է միջակի հարցը, իսկ Պիտիրիմ Սորոկինի դեմ ուղղված՝ Լենինի հողվածք, վորը միջակի հետ համաձայնության դալու լողունդն է հռչակել, մամու-լում յերևան է յեկել 1918 թ. նոյեմբերին, կուսակցության VІІІ համադումարից չորս ամիս առաջ:

Մի՞թե պարզ չէ, վոր կուսակցության VІІІ համադու-մարն ամբողջապես ու լիովին հաստատեց Լենինի այն լուրջունդը, վոր հռչակված է Պիտիրիմ Սորոկինի դեմ ուղղված նրա հողվածում, վորպես մի լողունդ, վորով կուսակցու-թյունը պարտավոր է դեկավարվել դյուղում կատարած իր աշխատանքում՝ սոցիալիստական շինարարության ներկա ամբողջ Ժամանակաշրջանում:

Վո՞րն է Լենինի լողունդի աղը:

Լենինի լողունդի աղն այն է, վոր նա դարձանալի դե-պուկ կերպով ըմբռնում է դյուղում կատարելիք կուսակցա-կան աշխատանքի յեռամիասնական խնդիրը, վորն արտա-հայտված է մի սեղմ Փորձուլայով. ա) հենվի՛ր չքավորու-թյան վրա, բ) համաձայնություն կայացրո՛ւ միջակի հետ, գ) վոչ մի բոպե մի՛ դադարեցնի պայքարը կուլակի դեմ: Ապա մի փորձեցե՛ք վերցնել այս Փորձուլայից նրա մասերից մեկը վորպես բազա տվյալ մոմենտում դյուղում կատարե-լիք աշխատանքի համար, մոռանալով նրա մնացած մասե-րը, —և դուք անսպասձառ փակուղի կընկնեք: Արդյոք կարե-լի՞ յե սոցիալիստական շինարարության ներկա փուլի պայ-մաններում իսկական ու ամուր համաձայնություն կայաց-նել միջակի հետ՝ առանց չքավորության վրա հենվելու և

առանց կուլակի դեմ պայքար մղելու: Չի կարելի: Կարելի՞
յի արդյոք այժմյան դարդացման պայմաններում հաջող
պայքար մղել կուլակի դեմ՝ առանց չքավորութան վրա
հենվելու և առանց միջակի հետ համաձայնություն ունենա-
լու: Չի կարելի: Ի՞նչպես մի ընդհանրացնող լողունդով
ամենից ավելի հաջող ձևով արտահայտել գյուղում կա-
տարելիք կուսակցական աշխատանքի այս յեռամիասնական
խնդիրը: Յես կարծում եմ, վոր Լենինի լողունդն այս
խնդրի ամենից հաջող արտահայտությունն է: Հարկավոր
է ընդունել, վոր Լենինից ավելի հաջող չես ասի...

Ինչո՞ւ չէ անհրաժեշտ Լենինի լողունդի նպատակահար-
մարությունն ընդգծել հենց այժմ, գյուղում կատարվող աշ-
խատանքի հենց սվյալ պայմաններում:

Այն պատճառով, վոր հենց այժմ է նկատվում առան-
ձին ընկերների հակումը՝ մաս-մաս անել գյուղում կատա-
րելիք կուսակցական աշխատանքի յեռամիասնական խնդիրը
և այդ մասերն իրարից անջատել: Սա ամբողջապես հաս-
տատվել է այս տարվա հունվար-փետրվարի մեր հացա-
մթերման կամպանիայի պրակտիկայով: Վոր միջակի հետ
հարկավոր է համաձայնություն հաստատել—այս գիտեն բո-
լոր բոլշևիկները: Բայց թե ինչպես հաստատել այդ համա-
ձայնությունը—այս ամեն վոք չի հասկանում: Վոմանք
մտածում են միջակի հետ համաձայնություն հաստատել՝
կուլակության դեմ պայքար մղելուց հրաժարվելու միջո-
ցով կամ այդ պայքարը թուլացնելու միջոցով. իրը թե՛
կուլակության դեմ մղվող պայքարը կարող է խրտնեցնել
միջակների մի մասին, նրա ունևոր մասին: Մյուսները
մտածում են միջակի հետ համաձայնություն կայացնել
չքավորության կազմակերպման աշխատանքից հրաժարվելու
միջոցով կամ այդ աշխատանքը թուլացնելու միջոցով. իրը
թե՛ չքավորության կազմակերպումը տանում է դեպի չքա-
վորության առանձնացում, իսկ առանձնացումը կարող է
մեղանից խրտնեցնել միջակներին: Ճիշտ գծից կատարվող
այս շեղումների հետևանքով ստացվում է այն մարքսիստա-
կան դրույթի մոռացումը, վոր միջակը տատանվող դասա-
կարգ է, վոր միջակի հետ հաստատվող համաձայնությունը

կարելի յե ամուր դարձնել, յեթե կուլակուլթյան դեմ վըճ-
ուական պայքար մղվի և աշխատանքը չքափորության մեջ
ուժեղացվի, վոր առանց այս պայմանների միջակիւ կարող
է տատանվել-թեքվել դեպի կուլակուլթյունը, վորպես դեպի
մի ուժ: Վերհիշեցեք Լենինի խոսքերը, վոր նա ասել է
կուլակուլթյան VIII համագումարում.

«Անհրաժեշտ է վորոշել վերաբերմունքը դեպի այն դասակարգը,
վորը վորոշ կայուն դրուքյուն չունի: Պրակտորիտոր մասսայորեն
սոցիալիզմի կողմն է, բուրժուազիան մասսայորեն սոցիալիզմին դեմ է.
այս յերկու դասակարգերի միջև հարաբերությունը վորոշելը հեշտ է:
Իսկ յերբ մենք անցնում ենք այնպիսի մի խավի, ինչպիսին միջակ դյու-
զացիությունն է, ապա բանից դուրս է գալիս, վոր սա մի այնպիսի
դասակարգ է, վորը տատանվում է: Նա մասամբ սեփականատեր է,
մասամբ՝ աշխատավոր: Նա չի շահագործում աշխատավորներն ու
ներկայացուցիչներն: Հարկ է յեղել, վոր նա տատանակներ շարունակ
մեծազույն աշխատանքով պաշտպանի իր դրությունը, նա իր վրա զղա-
ցել է կալվածատերերի ու կապիտալիստների շահագործումը, նա կրել
է ամեն ինչ, և միևնույն ժամանակ նա սեփականատեր է: Այս պատ-
ճասով՝ մեր վերաբերմունքը դեպի այս տատանվող դասակարգը հսկա-
յական դժվարություններ է ներկայացնում» («Ռիկ VIII համագումար»,
սղագիր հաշվետվություն, էջ 346):

Բայց լինում են ճիշտ դժից ուրիշ շեղումներ էլ, վո-
րոնք պակաս վտանգավոր չեն, քան նախորդները: Պատա-
հում է, վոր կուլակուլթյան դեմ պայքար մղում են, բայց
այնպես անչնորհք ու անհեթեթ կերպով են մղում, վոր
հարվածներն իջնում են միջակի ու չքափորի վրա: Հեռա-
վանքն այն է լինում, վոր կուլակը վողջ-առողջ է մնում,
միջակի հետ դաշինք հաստատելու գործը ճեղքվածք է ստա-
նում, իսկ չքափորության մի մասը ժամանակավորապես
ընկնում է կուլակի ճանկը, վորն ականահատման (ВОУГОМ-
НУЮ) պայքար է մղում խորհրդային քաղաքականության
դեմ: Այնպիսի դեպքեր էլ են լինում, յերբ կուլակության դեմ
մղվող պայքարը փորձում են վերածել կուլակաթափման,
իսկ հացամթերման աշխատանքը—պարենամանատրման՝ մս-
ուանալով, վոր կուլակաթափումը մեր պայմաններում հի-

1 Ընդդոմն իմն է: Ի. Ուո.:

մարտիկունն և, իսկ սլարենմասնաարումը նշանակում և վո՛չ
թե դաշինք միջակի հետ, այլ պայքար նրա դեմ:

Ինչի՞ց են առաջ դալիս կուսակցական գծից կատար-
վող այս շեղումները:

Այն բանը չհասկանալուց, վոր գյուղում կատարվող
կուսակցական աշխատանքի յեռյակ խնդիրը միասնական ու
անբաժան խնդիր և: Այն բանը չհասկանալուց, վոր կուլա-
կուլթյան դեմ պայքարելու խնդիրը չի կարելի անջատել մի-
ջակի հետ համաձայնություն կայացնելու խնդրից, իսկ այս
յերկու խնդիրները— չբալորությունը գյուղում կուսակցու-
թյան հենարանի վերածելու խնդրից¹:

1 Սրանից հետևում և, վոր ճիշտ դից կատարվող շեղումները յեր-
կու տեսակի վտանգ են ստեղծում բանվորների ու գյուղացիների դու-
շինքի դարձի համար. վտանգ նրանց կողմից, ովքեր մտածում են, ա-
սենք, հացամթերման ժամանակավոր արտակարգ ձեռնարկումները կու-
սակցության մշտական կամ տեական կուրսի վերածել, և վտանգ նրանց
կողմից, ովքեր մտածում են արտակարգ ձեռնարկումների վերացումն
ոգտադորձել կուլակին սանձալույծ անելու համար, առևտրի լիակատար
ազատություն հայտարարելու համար՝ առանց պետության որդանների
կողմից առևտուրը կարգավորելու: Այս ոլատճառով՝ ճիշտ գիծն ապա-
հովելու համար անհրաժեշտ է պայքար մղել յերկու ճակատի վրա:

Ողտվում եմ առիթից՝ նշելու, վոր մեր մամուլը միշտ չէ, վոր
պահպանում է այս կանոնը, յերբեմն ցուցարեքելով վորոշ միակողու-
թյուն: Պատահում է, որինակ, վոր մերկացնում են նրանց, ովքեր ցան-
կանում են հացամթերումների արտակարգ ձեռնարկումները, վորոնք
ժամանակավոր բնույթ ունեն, վերածել մեր քաղաքականության մշտա-
կան կուրսի՝ սպառնալիք ստեղծելով գողման համար: Այդ շատ լավ է:
Բայց վատ է և ճիշտ չէ, յերբ սրա հետ միաժամանակ բավականաչափ
ուշադրություն չեն նվիրում ու ինչպես հարկն է չեն մերկացնում նը-
րանց, ովքեր սպառնում են գողմանը մյուս կողքից, չեն մերկացնում
նրանց, ովքեր անձնատուր են լինում մանր-բուրժուական տարերքին,
պահանջում են դյուղի կապիտալիստական տարրերի դեմ մղվող պայ-
քարը թուլացնելու առևտրի լիակատար ազատություն սահմանել՝ առանց
պետության կարգավորող դերի, այսպիսով խարխելով գողումը մյուս
ձայրից: Այս արդեն վատ է: Այս միակողությունն է (ОДНОКОСТЬ):

Լինում է նաև այն, վոր մերկացնում են նրանց, ովքեր ժխտում են, ա-
սենք, ավյալ ստադիայում գյուղատնտեսության բազա հանդիսացող ան-
հատական մանր ու միջակ գյուղացիական տնտեսությունների բարձ-
րացման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Այս շատ
լավ է: Բայց վատ է և ճիշտ չէ, յերբ սրա հետ միաժամանակ չեն

Ի՞նչ պետք է անել, վորպեսզի այս խնդիրները միմյան-
ցից չանջատվեն դյուզում կատարվող մեր ընթացիկ աշխա-
տանքի ժամանակ:

Դրա համար հարկավոր է, առնվազն, տալ այնպիսի դե-
կավար լողունդ, վորն այդ բոլոր խնդիրները միավորեր մի
ընդհանուր Փորձուլայի մեջ, վորը (լողունդը), հեռաբար,
թույլ չտար, վոր այդ խնդիրներն իրարից անջատվեն:

Այդպիսի Փորձուլա, այդպիսի լողունդ արդյոք կա՞
մեր կուսակցական գինանոցում:

Այո՛, կա: Այդպիսի Փորձուլա յե հանդիսանում է ենի-
նի լողունդը՝ «կարողանալ համաձայնության հասնել միջակ
գյուղացու հետ՝ վոչ մի ըսպե չհրաժարվելով կուլակի դեմ
պայքարելուց ու ամրապես հենվելով միայն չքավորության
վրա»:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այս լողունդն ա-
մենից ավելի նպատակահարմար ու համապարփակ լողունդն
է, վոր այն հարկավոր է առաջին պլանը քաշել հենց այժմ,
դյուզում կատարվող աշխատանքի հենց տվյալ պայմանե-
րում:

Դուք էենինի լողունդն «ոսպիցիոն» լողունդ եք հա-
մարում ու հարցնում եք ձեր նամակում. «Ի՞նչպես կարող եր
պատահել, վոր... այդ ոպոզիցիոն լողունդը տպվել է 1928
թվականի մայիսի 1-ին «Правда»-յում... Ինչո՞վ կարելի յե
բացատրել այդ լողունդի լույս տեսնելը Համկի կկ-ի սրգան
«Правда»-յի եջերում, արդյո՞ք այդ լակ տեխնիկակա՞ն վրի-
պակ է, թե այդ կոմպրոմիս է ոպոզիցիայի հետ՝ միջակի
հարցում»: Ինչ ասել կուզի՞ ահավոր և ասլած: Բայց և
այնպես՝ ավելի գզույ՜ «չըջաղարձերում», ընկ. Ս., չլինի

մերկացնում նրանց, ովքեր նսեմացնում են կոլտնտեսությունների ու
խորհանտեսությունների նշանակությունը և չեն տեսնում այն բանը,
վոր անհատական մանր ու միջակ գյուղացիական տնտեսության բարձ-
րացման խնդիրը պետք է դործնակամորեն լրացվի կոլտնտեսային-խորհ-
անտեսային շինարարության բարձրացման խնդրով: Այս արդեն միակի-
ցություն է:

Ճիշտ գիծն սպահովելու համար հարկավոր է պայքար մղել յեր-
կու Պակաուի վրա ու դեն գցել ամեն մի միակողություն:

Թե հանկարծ հարկ լինի, վոր դուք, ձեր կայտառությամբ, դաք այն յեզրահայության, վոր հարկավոր ե արգելել մեր ծրագրի տպադրությունը, ծրագիր, վորն ամբողջությամբ հաստատում ե Լենինի լողունդը (փա՛ստ ե), հիմնականում մշակվել ե Լենինի կողմից (բնա՛վ յերբեք ոպողիցիոներ չե) ե ընդունված ե կուսակցության VIII համագումարի կողմից (կուսակցության, վորը նո՛ւյնպես ոպողիցիոն չե): Ավելի շա՛տ հարգանք մեր ծրագրի հայանի կետերին, վոր վերաբերում են գյուղում յեղած սոցիալական խմբավորումներին: Ավելի շա՛տ հարգանք մեր կուսակցության VIII համագումարի կողմից միջակ գյուղացիության մասին ընդունված վճիռներին... Ինչ վերաբերում ե «կոմպրոմիս ոպողիցիայի հետ միջակի հարցում» ձեր Ֆրագին, ասլա այն, այդ Ֆրագը, յես կարծում եմ, արժանի չե, վոր այն հերքեն. դուք, Թերես, տաքացած վիճակում եք ասել այն:

Ձեզ, կարծես, չփոթեցնում ե այն հանդամանքը, վոր Լենինի լողունդի մեջ ե Համկի ծրագրի մեջ, վորն ընդունվել ե VIII համագումարում, խոսվում ե միջակի հետ համաձայնություն կայացնելու մասին, մինչդեռ VIII համագումարի բացման ժամանակ արտասանած իր ճառում Լենինը խոսում ե միջակի հետ հաստատուն դաշինք կնքելու մասին: Դուք սրա մեջ, Թերես, հակասության պես ինչ-վոր բան եք տեսնում: Դուք, հնարավոր ե, մինչև իսկ հակամետ եք յենթադրելու, վոր միջակի հետ համաձայնություն կայացնելու քաղաքականությունը ինչ-վոր նահանջի պես մի բան ե նրա հետ դաշինք կնքելու քաղաքականությունից: Այդ ճիշտ չե, ընկ. Ս.: Այդ մեծ մոլորություն ե: Այդպես կարող են մտածել միայն այնպիսի մարդիկ, ովքեր կարողանում են կարգալ լողունդի տառերը, բայց չեն կարողանում լողունդի իմաստը թափանցել: Այդպես կարող են մտածել այնպիսի մարդիկ, վորոնք չգիտեն միջակի հետ դաշինք կնքելու, համաձայնություն կայացնելու վերաբերյալ լողունդի պատմությունը: Այդպես կարող են մտածել միայն այն մարդիկ, վորոնք ընդունակ են յենթադրելու, թե Լենինը, վորը VIII համագումարում արտասանած իր ներածական ճառի մեջ հայտարարել ե միջակի հետ «հաստա-

տուն դաշինքի» քաղաքականութիւնն վարելու մասին, նու-
հանջ ե կատարել ինքն իրենից՝ ասելով նույն այդ համա-
գումարում արտասանած իր մեկ ուրիշ ճառում և VIII հա-
մագումարում ընդունված՝ կուսակցութեան ծրագրի մեջ,
վոր մեզ այժմ միջակի հետ «համաձայնութիւն» կայացնե-
լու քաղաքականութիւնն ե հարկաւոր:

Բանն ինչո՞ւմն ե այստեղ: Բանը նրանումն ե, վոր Լե-
նինն ու կուսակցութիւնը հանձին VIII համագումարի վոչ
մի տարբերութիւն չեն տեսնում «համաձայնութիւն» հաս-
կացողութեան և «դաշինք» հասկացողութեան միջև: Բանը
նրանումն ե, վոր ամենուրեք, VIII համագումարում ար-
տասանած իր բոլոր ճառերում, Լենինը հալխասարութեան
նշան ե դնում «դաշինք» հասկացողութեան և «համաձայնու-
թիւն» հասկացողութեան միջև: Նույն այդ բանը պետք ե
ասել VIII համագումարի «դեպի միջակ դյուղացին ունենալիք
վերարեւմունքի մասին» բանաձեռի նկատմամբ, վորտեղ
«համաձայնութիւն» հասկացողութեան և «դաշինք» հասկա-
ցողութեան միջև հալխասարութեան նշան ե դրվում: Յեւ
քանի վոր Լենինն ու կուսակցութիւնը միջակի հետ համա-
ձայնութիւն պահպանելու քաղաքականութիւնը համարում
են վոչ թե պատահական ու փութանցիկ, այլ տևական քա-
ղաքականութիւն, նրանք ունեյին և ունեն բոլոր հիմունք-
ները՝ միջակի հետ համաձայնութիւն պահպանելու քաղա-
քականութիւնը նրա հետ հաստատուն դաշինք կնքելու քա-
ղաքականութիւն անվանելու և, ընդհակառակը, միջակի հետ
հաստատուն դաշինք պահպանելու քաղաքականութիւնը՝
նրա հետ համաձայնութիւն պահպանելու քաղաքականու-
թիւն: Բախական ե ծանոթանալ կուսակցութեան VIII հա-
մագումարի սղագիր հաշվետւութեանը և նույն համագու-
մարի՝ միջակի վերարեւոյ բանաձեռին, վորպեսզի համոզ-
վենք սրանում:

Ահա մի քաղվածք VIII համագումարում Լենինի արտա-
սանած ճառից.

«Ամենուրեք խորհրդային աշխատողների անփորձութեան շնորհիվ,
հարցի դժվարութեան շնորհիվ այն հարվածները, վորոնք նախանշված
եյին կուսակների համար, իջնում եյին միջակ դյուղացիութեան վրա:

Այստեղ մենք շարժադանց մեղանչել ենք: Սրա վերարերյայ հավաքած փորձը հոգնի մեղ անելու ամեն բան, վորպեսզի դրանից խուստիենք հետագայում: Ահա մի խնդիր, վոր կանգնած է մեր առջև վո՛չ թե թեորիապես, այլ զործնականապես: Դուք հիանալի դիտեք, վոր այս խնդիրը դժվար խնդիր է: Մենք չունենք այնպիսի բարեբներ, վոր կարող լինեյինք տալ միջակ դյուղացուն, իսկ նա մատերիալիստ, ռուսկոտիկ է ու պահանջում է կոնկրետ նյութական բարեբներ, վոր մենք այժմ չենք կարող տալ և առանց վորոնց յերկիրը պետք է յուր դնա, գուցե, ելի ամիսներ տևող այն ծանր պայքարի բնիաբանում, վորն այժմ լիակատար հալթություն է խոստանում: Բայց մենք կարող ենք շատ բան տնել մեր վարչական պրակտիկայում—բարելավել մեր ապարատը, ուղղել բազմաթիվ շարահարմաներ: Մենք կարող ենք մեր կուսակցության գիծը, վորը բավարար չափով չէ գնացել դեպի բլուկ, դեպի դաշինք, դեպի համաձայնություն միջակ դյուղացիության հետ, մենք կարող ենք և պետք է ուղղենք ու շտկենք այդ գիծը» («Ռիկ VIII համադումար», սղտգիր հաշվետվություն, էջ 24—25):

Դուք անսնում եք, վոր Լենինը տարբերություն չի դնում «համաձայնություն» ու «դաշինքի» միջև:

Ահա և քաղվածքներ VIII համադումարի՝ «Դեպի միջակ դյուղացիությունն ունենալիք վերարերմունքի մասին» քանաձևից.

«Միջակ դյուղացիներին չիոթել կուլակության հետ, այս կամ այն չափով նրանց վրա տարածել կուլակության դեմ ուղղված միջոցառումները, նշանակում է ամենակոպիտ կերպով խախտել վո՛չ միայն խորհրդային իշխանության բոլոր դեկրետներն ու նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները, վորոնք բուրժուազիային տապալելու համար պրոլետարիատի մղած վճռական պայքարի ժամանակաշրջանում պրոլետարիատի կողմից միջակ դյուղացիության հետ կնքելիք համաձայնությունը մատանշում են վորպես ամեն մի շահագործման վերացմանն անհիշանդապիս կերպով անցնելու պայժաններից մեկը:

Միջակ դյուղացիությունը, վոր համեմատաբար աժուր անտեսական արմատներ ունի, չնորհիվ այն բանի, վոր դյուղասանտեսական տեխնիկան հետ է մնում արդյունաբերականից մինչև անդամ առաջավոր կտայիտալիստական յերկրներում, ել չենք խոսում Ռուսաստանի մասին,—պրոլետարական հեղափոխության սկզբնուց հետո էլ բավական յերկար ժամանակ կլիմանա: Ուստի խորհրդային աշխատողների, ինչպես նաև համասարապես կուսակցության գործիչների տակտիկան դյուղում պետք է կտուցվի միջակ դյուղացիության հետ տևական ժամանակաշրջանով գործակցությունն ունենալու հաշվով...

... Խորհրդային իշխանության միանգամայն ճիշտ քաղաքականու-
թյունը դյուզում արահուլում է, այսպիսով, հաղթական սրբուհարիա-
տի դաշինքն ու համաձայնությունը միջակ դյուզացիության հետ...

... Բանլորդ-դյուզացիական կառավարության ու կոմունիստական
կուսակցության քաղաքականությունն այսուհետեւ եւ պետք եւ տարվի
սրբուհարիատի ու ամենաչքավոր դյուզացիության կողմից միջակ դյու-
զացիության հետ համաձայնություն ունենալու այս վոզով¹» (Ձեկի VIII
համադումար, սղադիր հաշվետվություն, էջ 417—420) :

Ինչպես տեսնում եք, բանաձևը նույնպես տարբերու-
թյուն չի դնում «համաձայնության» ու «դաշինքի» միջև :

Ավելորդ չի լինի նկատել, վոր VIII համադումարի այս
բանաձևում չկա և վոչ մի խոսք միջակի հետ «հաստատուն
դաշինք» ունենալու մասին: Սակայն արդյոք այդ նշանակում
ե, վոր բանաձևը դրանով եւ հենց նահանջում ե միջակի
հետ «հաստատուն դաշինքի» քաղաքականությունից: Վո՛չ,
չի նշանակում: Սա լոկ այն ե նշանակում, վոր բանաձևը
հայտարարության նշան ե դնում «համաձայնություն», «դոր-
ծակցություն» հասկացողության ու «հաստատուն դաշինք»
հասկացողության միջև: Յեւ այդ հասկանալի յե. չի կա-
րող միջակի հետ «դաշինք» լինել առանց նրա հետ «համա-
ձայնություն» լինելու, իսկ դաշինքը միջակի հետ չի կարող
«հաստատուն» լինել, յեթե չկա «տեական» համաձայնու-
թյուն ու դործակցություն նրա հետ:

Մրանք են փաստերը:

Յերկուսից մեկը. կա՛մ Լենինն ու կուսակցության VIII
համադումարը նահանջել եմ միջակի հետ «հաստատուն դա-
շինք» ունենալու վերաբերյալ լենինյան հայտարարությու-
նից, կա՛մ հարկավոր ե դեն դցել այս անլուրջ յենթադրու-
թյունը և ընդունել, վոր Լենինն ու կուսակցության VIII
համադումարը վոչ մի տարբերություն չեն դնում «համա-
ձայնություն» հասկացողության և «հաստատուն դաշինք»
հասկացողության միջև:

Այսպես ուրեմն, ով չի ցանկանում դատարի տառակե-
րության զոհ լինել, ով ցանկանում ե թափանցել լենինյան
այն լողունգի խմատը, վորը խոսում ե չքավորության վրա
հենվելու մասին, միջակի հետ համաձայնություն ունենալու

1 Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստ.:

և կուլակուլութեան դեմ պայքարելու մասին, — նա չի կարող չհասկանալ, վոր միջակի հետ համաձայնութիւն ունենալու քաղաքականութիւնը նրա հետ հաստատուն դաշինք ունենալու քաղաքականութիւնն է:

Չեր սխալն այն է, վոր դուք չեք հասկացել ուղղիցիայի ժուլիկական արարքը ու յենթարկվել եք նրա պրոփոկացիային՝ ձեզ դեցելով այն թակարդը, վոր հակառակորդը դրել էր ձեզ համար: Ուղղիցիոն ժուլիկներն ազազակում ու աղմկում են՝ հալատացնելով, վոր իրենք կողմնակից են միջակի հետ համաձայնութիւնն ունենալու վերաբերյալ Լենինի լոզունգին, ընդվորում նրանք պրոփոկատորական անարկ են անում այն մասին, թե «համաձայնութիւնը» միջակի հետ — մի բան է, իսկ «հաստատուն դաշինքը» նրա հետ — մի ինչ — վոր ուրիշ բան: Սրանով նրանք ցանկանում են յերկու նապաստակ սպանել. նախ՝ թագցնել իրենց իսկական դիրքը միջակ դուրսցիութեան վերաբերմամբ, մի դիրք, վորը վո՛չ թե համաձայնութիւնն է միջակի հետ, այլ «գլխատութիւնն է միջակի հետ» (տե՛ս ուղղիցիոններ Սմիլնովի հայտնի ճառը, վորից յես մեջբերումներ եմ արել Մոսկւլայի նահանգական XVI կուսկոնֆերենցիայում), յերկրորդ՝ «համաձայնութեան» ու «դաշինքի» կարծեցյալ տարբերութեամբ վորտալ բոլշեիկներին մեջ յեղած պարզամիտներին ու վերջնականապես շփոթեցնել նրանց՝ դեն հրելով նրանց Լենինից:

Իսկ ի՞նչ են անում մեր ընկերներից վոմանք սրան իբրև պատասխան: Փոխանակ ուղղիցիոն խարդախիչներին դիմակը պոկելու, փոխանակ մերկացնելու նրանց այն բանում, վոր նրանք կուսակցութեանը խարում են իրենց իսկական դիրքի վերաբերմամբ, — սրա փոխարեն նրանք կարթւում են, իրենց վոտքով թակարդ են ընկնում և թույլ են տալիս, վոր իրենց դեն հրեն Լենինից: Ուղղիցիան ազմուկ է հանում Լենինի լոզունգի առթիւ, ուղղիցիոններները լենինյան լոզունգի կողմնակիցներ են ձևացնում իրենց, — ուրեմն յես պետք է սահմանածրվեմ այդ լոզունգից, վոր պետքի ինձ ուղղիցիայի հետ չչփոթեն, այլապես ինձ կարող են մեղադրել «ուղղիցիայի հետ կոմպրոմիսի մեջ մըտ-

նելու» համար,—ա՛յս և այդ ընկերների տրամաբանութիւններ:

Յե՛վ սա ոսկոզիցիայի ժուլիկական պրիտմների միակ որինակը չէ: Վերցրե՛ք, որինակ, ինքնաքննադատութեան լողունդը: Բողջեկիները չեն կարող չիմանալ, վոր ինքնաքննադատութեան լողունդը մեր կուսակցական գործողութեան հիմքն է, պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման միջոցը, կադրերի դատախարակման բոլջեկիյան մեթոդի հողին: Ոսկոզիցիան աղմուկ և բարձրացնում, հալատացնելով, թե ինքնաքննադատութեան լողունդն ինքը, ոսկոզիցիան և հնարել, վոր կուսակցութիւնը խլել է նրանից այդ լողունդը և, այդպիսով, անձնատուր և յեղել ոսկոզիցիայի հանդեպ: Այսպես վարվելով՝ ոսկոզիցիան ցանկանում է ձեռք բերել դոնե յերկու բան. նախ՝ թաղցնել բանվոր դատակարգից ու խարել նրան այն բանում, վոր կուսակցականութիւնը կործանելու նպատակ ունեցող ոսկոզիցիոն ինքնաքննադատութեան և կուսակցականութիւնը ամրացնելու նպատակ ունեցող բոլջեկիյան ինքնաքննադատութեան միջև անգունդ կա. յերկրորդ՝ կարթել պարզամտներից վրոմանց ու հարկադրել նրանց, վոր սահմանաձրվին ինքնաքննադատութեան վերաբերյալ կուսակցական լողունդից:

Իսկ ի՞նչ վերաբերմունք են ցույց տալիս այս բանին մեր միջանի ընկերները: Ոսկոզիցիային պատկանող խարդախների դիմակը պատռելու և բոլջեկիյան ինքնաքննադատութեան լողունդը պաշտպանելու փոխարեն,—նրանք իրենց փոռքով թակարդ են ընկնում, հետ են հրվում ինքնաքննադատութեան լողունդից, ոսկոզիցիայի դուզուկով են պարում և... անձնատրվում են նրա հանդեպ, սխալաբար յենթադրելով, թե սահմանաձրվում են ոսկոզիցիայից:

Այսպիսի որինակներն մի ամբողջ կույտ կարելի յեր բերել:

Բայց մենք մեր աշխատանքի մեջ վոչ մեկի դուզուկով յենք կարող պար գալ: Առավել ևս մեր աշխատանքում մենք չենք կարող զեկավարվել նրանով, ինչ ոսկոզիցիոններն են ասում մեր մասին: Մենք պետք է գնանք մեր ճանապարհով՝

զեն չպրտելով թե՛ ոպողիցիայի ժուլիկական արարքները,
թե՛ ոպողիցիոներների պրովոկացիային յենթարկվող մեր
բոլշևիկներից վոժանց սխալները: Հիշեցեք Մարքսի խոսքե-
րը. «Գնա՛ զո ճանապարհով, իսկ մարդիկ ինչ ուզում են,
թող ասեն»:

12 հուլիսի 1928 թ.

„Правда“ № 152,

3 հուլիսի 1928 թ.:


10936 2983 A $\frac{11}{6930}$

ՏրօՅ. 1940

Հայերեն թարգմանությունը խմբագրեց Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արույան

Գլավլիտի լիազոր № 1902, հրատ. № 612,
Պատվեր № 162, տիրաժ 5.000
Հանձնվել է արտագրություն 21/XI 1938 թ.
Ստորագրվել է տպագրելու 29/XI 1938 թ.
Գինը 20կ., կազմը 30 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության
հրատարակչության տպարան, Ֆերևան, 1938




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021251

—024.
Г.Г.С. 20-11.



И. СТАЛИН
ЛЕНИН И ВОПРОС О СОЮЗЕ
С СЕРЕДНЯКОМ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938